№ 190 ՈՒՐԲԱԹ 30 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 30 ՕԳՈՍՏՈՍԻ № 190

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԹՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետք՝ 20 կ., IV երեսի վրա—10 կօպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում՝ Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիեննայում՝ Большая 38, Թբիլիսում՝ Площадь Биржи 8

1913 թուականի բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դպրոց-Պանսիօն
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆ-ԱՒԱԳԵԱՆԻ
Երկսեռ երեխաների ընդունելութիւն վեց տարեկան հասակից օգոստոսի 25-ից։ Ընդունվում են նաև լիակատար գիշերօթիկ երեխաներ։
Սօլօլակ, Բէհբութեան փ. տ. № 38, բակում, վերին յարկ։
(6 ս.) առ. 625. 3—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ
Ուրբաթ, օգոստոսի 30-ին
Հայ ընտի դերասանները մասնակցութեամբ
Յայտնի դերասան Ց. ԱԲԻԼԵԱՆԻ
Կը ներկայացնեն
Պարոնեանի յայտնի կոմէդիան
ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ
3 գործ.
Մասնակցում են՝ տ. տ. Յասմիկ, Սօֆի, Վարդիթեր, պ. պ. Աբէլեան, Թորոսեան, Տէր-Առաքելեան, Շաւարշ, Մուրադեան, և այլք։
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին
Հիւրերը ընդհանուր հիմունքներով։
Կառավարիչ՝ Ս. Թորոսեան
(ու.) առ. 696. 2—2

ՀԵՐԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

I

Կովկասեան փոխարքայի զեկուցագիրը, որի հետ մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին, ցոյց է տալիս, թէ որքան արդիւնաւէտ հետևանքների կարելի է հասնել խելացի պետական քաղաքականութեամբ ծայրագաւառներում, և անշուշտ թելադրում է շարունակել նոյն տեսակ գործունէութիւն ապագայում։

Ահա այդ թելադրանքի տրամադրութիւնը հրաւիրում է մեզ ընդգծել տեղական ինքնավարութեան, կրթարանների բազմացման, վարչական բարեկարգութեան, դատաստանական բարեկարգութեան և ընդարձակ մասնագիտական գործառնութիւնների հերթական նշանակութիւնը առաջիկայում։

Այն լայնահայեաց կուլտուրական քաղաքականութիւնը, որը հանդէս բերեց Կովկասեան փոխարքան, կարօտ է նոյնաբնոյթ աւելի ևս բազմաբովանդակ վերանորոգչական գործունէութեան՝ երկրի խաղաղ զարգացման պայմանները ապահովելու և բեղմնաւորելու։

Ամեն մի լուրջ հանրային ձեռնարկութեան ծրագիր, ամեն մի նախագծի գործնական իրականացման առաջարկ ապարէզ է մղում տեղական գործողների կարևոր հարցը, գաղափարների և սկզբունքների մարմնացման նպաստողների խնդիրը։ Եւ այդտեղ ամենաառաջին կէտն է հանդիսանում՝ մեր երկրին զեմստվային կամ տեղային ինքնավարական հաստատութիւնների շնորհումը։

Առանց զեմստվոյի այլևս անկարելի է երևակայել լուրջ ընդարձակ իրագործումն այն բոլոր գեղեցիկ առաջարկները, որոնք տարուում են տրց-ցրը, աջող լուծում այն խնդիրների, որոնք հանդէս են եկել և շարունակում են հանդէս գալ ժամանակակից մեր պէտքերի ուսումնասիրութեան և քննութեան ժամանակ։

Եւ անկասկած՝ եթէ այն մի քանի բարեացակամ և համակրելի բարեփոխութիւնները, որոնք մտցվեցին մեր երկրի կուլտուրական կեանքի մէջ, տուին մխիթարական հետևանքներ, մենք կարող ենք աւելի ևս խոշոր և աչքի ընկնող էական արդիւնքների սպասել, երբ բարենորոգչական գործունէութիւնը ընդարձակ ծաւալով առաջ տարվի, իրականացնելով տեղական ինքնավարութեան ըէֆօրմը։

Վերջին տարիների ընթացքում մեր երկրում նկատված դրական մի շարք երևոյթները, որոնք հանդէս եկան կուլտուրական շարժման և գործունէութեան ասպարէզում, մի-մի ապացոյցներ էին, որ երկրի մէջ արթնացել է ինքնաճանաչութեան և ինքնագործունէութեան ոգին և նա որոնում է ձևեր, եղանակներ և կաղապարներ՝ բեղմնաւոր սկզբնաւորութիւններ անելու մեր երկրի մէջ և արգասաւորելու ժողովրդի աշխատանքը և կուլտուրական աւիւնը։

Ա. Բալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅԵՐԻՑ

Դատապարտվածների շարանը.—Ցանուն «ազգերի համերաշխութեան».—Կառավարութեան մէջ կառավարութիւն.—Երկու չափ, երկու կշիռ.—Քիւրդական շարժման անորոշ արձագանքներ.

Էջրում, 19 օգոստոսի

Տեղ հասան 75 աքսորված հայ զինուորներ։ Նրանք մասնակցել են բալկանեան պատերազմին՝ որպէս օսմանցի հայ զինուորներ, Բօղոստոյում գերի են ընկել բուլգարների ձեռքը բազմաթիւ թիւրք զինուորների հետ միասին։ Երբ Բօղոստոն վերստին գրաւվեց թիւրքերի կողմից, հայ զինուորները խմբովին ձերբակալվեցին ու հանվեցին պատերազմական ատեանի առաջ։ Պատերազմական ատեանը նրանց պատիժ է սահմանել. որոշ ժամանակ բանտարկվելուց վերջ, զինուորական ծառայութեան ժամանակաշրջանը պիտի կրկնեն։ Ու հետևոսն, քաղցած ու անպատսպար քշել աքսորել են նրանց Էրզրումի վիլայէթում։ Ես տեսայ նրանց խումբը փողոցով անցնելիս, բոլորն էլ հայեր ու շրջապատված հեծեալ թիւրք զինուորներով։ Առաջ էր շարժվում խումբը, վհատ, կքած քայլերով։ Մի քանիսը ոտքերի վրա վէրքեր ունէին ու մնացել էին ետ. ձիաւոր թիւրք զինուորը հրմշտկում էր նրանց և առաջ քշում անզգայ սրտով։

— Քեաֆիր հայեր,—ասում էին թիւրքերը,—դուք էք Ռումելին բուլգարների ձեռք մատնողները... այ մենք ձեր...

Քայլում էր խումբը անվրդով ու լուռ, այդ նախատինքների հանդէպ խուլ ու անարտունջ, ցաւին, տանջանքին՝ համբ ու անզգայ։

Հայոց ազգ, ջահել դաւակներիդ արիւնն իսկ նուիրեցիր անյագ Մոլոքին—օսմանեան պետութեան—ու էլի նա արհամարհեց քեզ, թքեց մարմնիդ երեսին ու արիւնին, ոտնակոխ արեց քո բոլոր սրբութիւնները։ Ե՞րբ արդեօք կը վերջանայ քո անանկան համբերութիւնը, և ե՞րբ արդեօք կը սկսվի ընդվզումներիդ նոր ու կարմիր շրջանը։

* * *

Կոբում (Բուլանըկի գաւառ) կառավարութիւնը «յանուն ազգերի համերաշխութեան և միութեան գաղափարին» արգելել է ներկայացնել «Ասլան-Բալասի» դրաման։ Ներկայացման ընթացքում ոստիկանութիւնը բեմ է բարձրացել ու հրամայել է խակոյն ընդհատել խաղը։ Կարող էք երևակայել, թէ ինչպիսի՛ հոգեկան դրութիւն ու դառն վիճակի գիտակցութիւն էք զարթնելու հանդիսատես ժողովրդի մէջ։

* * *

Մուսա և Կասըմ յայտնի բէկերը զինված զօրամասերով ցանկացել են այցելութեան համար մտնել Խնուս-Բերդում։ Կառավարութիւնը մասնակի է [illegible] բումի նահանգապետը կարգադրել է Խնուսի կառավարութեան, որ թոյլ չը տրվի զինված մուտք։ Եւ կարծէք հակառակ այդ բոլորին, Մուսա և Կասըմ բէկերը սաբել են աւելի հանդիսաւոր մուտք։ Մի քանի տասնեակ զինված զօլամներ, որպէս առաջապահ, դրանց ետևից քիւրդ ձիաւոր երիտասարդներ, նրանց ետևից էլի զինված զօլամներ, և ապա Մուսա և Կասըմ բէկերը զինված թիկնապահներով, որոնցից վերջ հրիւրաւոր ձիաւորներ։ Պատմում են, որ թափօրը Խնուս-Բերդում տեղ-տեղ կանգ էր առնում, քիւրդական լօլօներ երգում. գլուխների մի աղջիկ պարելիս է եղել մէջ ընդ մէջ, քիւրդերը շուրջ-պար պարում և այլն և այլն։ Զօլամներից շատերը զինված են եղել կառավարական հրացաններով և մանլիխէր, մօսին, մաուզեր և այլ սիստեմի հրացաններով։

Թափօրը անց է կացել կառավարական շինութեան առջևից։ Կառավարութիւն, զօրք, ոստիկանութիւն—բոլորը լուռ հանդիսատես են եղել։

Ժանդարմները երբ ուզեցել են այցելութեան գնալ բէկերին, բէկի իշևանած տանը մօտենալիս, պատնաղ կանգնած զօլամները կրակելու սպառնալիքով զինաթափ են արել ժանդարմներին և այլն։ Մուսա և Կասըմ բէկերը նոյնպիսի փառքով մեկնել են Խնուսից։ Այժմ հարց է ծագում, թէ ո՞վ է իսկական տէրը այս երկրի, օսմ. խարխլած կառավարութիւնը թէ՞ Մուսա և Կասըմ բէկերը։ Հարց է [illegible] ուժեղ, բէկե՞րը թէ՞ կառավարութիւնը։ Եթէ զէնք կրելը արգելված է, ինչով բացատրել զինված զօլամներին և այլն և այլն։

Վանի շրջանում կառավարութիւնը հրիւրաւոր հրացաններ է բաժանել շամօկցի քիւրդերին, աւազակութիւնների դէմ պաշտպանվելու համար։ Բայց ով կը պաշտպանի անդէն հայերին նոյն և այլ բազմաթիւ քիւրդերի յարձակումներից, աւազակութիւններից։

Ճիշդ է, որ Վանի շրջանում կառավարութիւնը հայ գիւղացիներին էլ բաժանել է զէնքեր, բայց այնքան չնչին թիւով, որ մարդ ակամայ մտածում է, թէ երևի դա մի միջոց է քիւրդերին հարիւրաւոր զէնքերի բաժանման ակտը իրաւաբանական դարձնելու։

Դեռ երէկ, շուկայում, խուռն բազմութեան ներկայութեամբ, ոստիկանները ցեռեմոնիաներով խուզարկեցին մի հայի ու խլեցին նրա փոքրիկ ատրճանակը և ենթարկեցին իրան էլ պատասխանատուութեան։

* * *

Բիթլիսի Խուլիկ գիւղի շրջակայքում սպանված գտնվել է քիւրդ Խայրեդդինբէյը. նա վերադառնալիս է եղել Կովկասից։ Քիւրդերը պատմում են, որ նա գնացել էր Կովկաս քիւրդական շարժման մասին հրահանգներ և օժանդակութիւն ստանալու. Թիւրք կառավարութիւնը, լսելով նրա գաղտնի միսսիայի մասին, դաւադիրներ է ուղարկել և նրան սպանել տուել ճանապարհի վրա։

Բիթլիսի և Վանի շրջանից Էրզրում եկած քիւրդեր պատմում են, որ ռուսական սահմանի վրա քիւրդական շարժման մասնակցողներն և նրանց միացած հայ ապըստամբ ֆէդայիների համար բաժանվում են բերդան հրացաններ հասը 3 ր. 50 կօպէկով։

Քուրմ

ՀԱՅԱՍՏԱՆ

(«Daily Tel.» թերթի յօդուածը)

Շնորհաւորելի պարագայ մըն էր Լօնդօնի դեսպանաժողովին մէջ մեծ պետութեանց առած այն հաւաքական որոշումը, թէ բալկանեան տագնապը կարելի բոլոր միջոցներով պիտի սահմանափակուէր Եւրոպական Թիւրքիոյ մէջ։ Իրաւ է թէ Ֆրանսիա անդամ մը անոնց աչքին մացուց վտանգաւոր առաջարկ մը, Սուրիոյ մէջ ազդեցութեան շրջանակի մասին, և թէ ատեն մը Եգէական կղզիներուն խնդիրը շատ վտանգաւոր հանգամանք մը ստացաւ։ Սակայն թէև մեծ պետութիւնները վճռաբար որոշեցին նոր խնդիրներ չհանել, բայց Բալկաններու մէջ կացութեան յանկարծական յեղաշրջումը և ատոր հետևանքով Թիւրքիոյ վիճաւորական շարժումը մղեցին ձեռք առնել այն վերջին բանը, զոր պետութիւններէն և ոչ մէկը մեծ ու փոքր, Կարադաղ կամ Ռուսիա, չէին ուզեր գործադրուած տեսնել այս խառնակ կիւլին մէջ, այն է՝ Ռուսիոյ գործնական միջամտութիւնը Ասիոյ մէջ։ Ներկայ վայրկեանիս առկէ խուսափելու շատ քիչ շանսեր կան։ Բանի նկատի առնուլն ներկայ պայմանները, քանի Թիւրքիա ըմբռնէ թէ որքան մեծ են իր շահերը Լօնդօնի հաշտութեան դաշնագիրը յարգելուն և Բուլգարիան չբռնաբարելուն մէջ, այնքան կաւելնայ Եւրոպան լուրջ վտանգ մը ազատելու յոյսը։ Որովհետև Եւրոպական Թիւրքիոյ մէջ չկայ Եւրոպական շահ մը, զոր կարելի չըլլայ իրաւախոհութեամբ հարթել, սակայն Ասիական Թիւրքիոյ մէջ գործադրուելիք չորս առանձին պահանջներ կան, զորս ոչ Անգլիա, ոչ Ռուսիա, ոչ Գերմանիա և ոչ ալ Ֆրանսա կրնան ուէ իրաւարարական դատարանի որոշումին ենթարկել։

Այդ պահանջներէն մէկն է հայկական բարենորոգումներու խնդիրը։

Այսօր միւս խնդիրներով զբաղելու ոչ միջոց կայ, ոչ ալ ստիպողական անհրաժեշտութիւն մը։ Սակայն, հայկական բարենորոգումներու խնդիրը այլ ևս չի կրնար յետաձգուիլ։ Կրկնութիւն մը պիտի ըլլար ըսելը, թէ հայերը՝ իբրև ցեղ մը՝ Անգլիոյ ժողովուրդին համակրանքին արժանացած են։ Անգլիոյ կողմէ Հայաստանի նկատմամբ գործադրուած հանրային կամ մասնաւոր իւրաքանչիւր շարժում միշտ շնորհէ աւելի արդարութեան զգացումէն մղուած ըլլալով է որ տեղի ունեցած է։ Ներկայիս բացի Կ. Պոլսոյ մէջ և Եգէական ծովու եղերքին վրայ գտնուող յոյներէն (որոնք շատ լաւ կրնան ինքզինքնին հոգալ) միայն հայերը կը մնան Թիւրքիոյ մէջ քրիստոնեայ ըլլալով։ Այս խնդիրը կարևոր է։ Ամբողջ աշխարհի [illegible] մէջ (Համիդի օրով) հայկական անհելի ջարդեր տեղի ունեցան, և թէ Այ-Սոֆիանոյի, Բերլինի և Կիպրոսի դաշնագիրներուն մէջ հայերուն համար մտցուած յօդուածները մեռեալ տառ մնացին։ Հայերուն նոր-բին հանճարը ամբողջ դարեր մաւորական գերակշռութիւն մը առած է իրենց։

... Ռուսիա միշտ չէ պատասխանած։ Անցեալի դիւանագիտական բանակցութիւններուն մէջ շրջանակներ եղան, ուր Մոսկվոյը ըսաւ Անգլիոյ.

— Լաւ, եթէ այնքան կը սիրես հայերը, ինչու համար դուն ինքդ չես պաշտպաներ զանոնք։

Ատիկա անբնական պատասխան մը չէր Անգլիոյ քաղաքականութեան համար խնդրի մը մասին՝ որ կը շահագրգռէր Ռուսիան և Թիւրքիան, ու նախորդ սուլթանը՝ Արդիւլ Համիդ չէր դանդաղեր օգուտ քաղելու այս երկերեսութենէն։

Սուլթան Համիդի քաղաքականութեան հիմնաքարն էր արաբներու և քիւրդերու միացումը, ու այդ նպատակին հասնելու համար չկար աւելի դիւրին և աւելի ազդու ճամբայ մը՝ քան պարբերաբար ջարդել անօգնական քրիստոնեաները։ Պէտք է յիշել թէ Համիդ՝ ինքը՝ կը նուիրագործէր իր օրով պատահած բոլոր ջարդերը։

Վերջին քանի մը տարիներու միջոցին Ռուսիա շարունակ զօրք համախմբեց Կովկասի հարաւային մասին մէջ՝ Արարատ լեռան մօտերը այն կէտին վրայ, ուր երեք թագաւորութիւններու սահմանագուխները կը միանան։ Մինչև հիմա կը կարծուէր թէ Եւրոպական կնճիռները պիտի լուծուէին առանց ուրիշ խնդիրներ խառնելու։

... Օգտակար է յիշեցնել «Դէյլի-Տելեգրաֆի» ընթերցողներուն թէ հայկական բարձրաւանդակներուն վրայ ուէ գործողութիւն ուէ իրական կարողութիւն չունի մեզի համար։ Եթէ պէտք է ճշմարտութիւնը ըսել, Ռուսիոյ ազդեցութիւնը—միշտ ի մտի ունենալով թէ այդ ազդեցութիւնը երբէք չի նուազեցներ Պարսից ծոցին և անոր եղերքներուն վրայ ուէ օտար միջամտութեան դէմ մեր ունեցած իրաւունքը և չի սպառնար ատոր—բարենորոգումներու և բարւոք վարչութեան մը համար եղած է։ Բան մը պէտք է տեղի ունենայ հարաւային արևելեան Եւրոպայի՝ մէջ վերահաստատելու համար հաւասարակշռութիւնը, այն եղանակով՝ որ դիւանագէտները իրարու հետ համաձայնին։

[illegible] մը, կամ Բուլգարիոյ եղերքին վրայ նաւային ցոյց մը կրնայ փափագուած արդիւնքը տալ...։ Ներկայիս մենք միմիայն կը սպասենք և կը դիտենք։ Սակայն կուզեմ անգամ մըն ալ շեշտել «Դէյլի Տելեգրաֆի» ընթերցողներուն, թէ Բալկանի վերջին դէպքերը շատ վտանգաւոր արդիւնքներ պիտի տան։

(«Ժամանակ»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 օգոստոսի

Պետերբուրգ. — Զինուորական խորհուրդը որոշեց շարունակել Վարշավայի, Վիեննայի և Կովկասեան շրջանների ռոճիկները աւելցնելու օրէնքի գործադրումը՝ մինչև որ այդ տեղերի վրա էլ տարածվի բնակարանի վարձ տալու դրութիւնը։

Հելզօլանդ.—«Լ. I» դիրիժաբլի մարդկանցից 7-ը փրկված են, իսկ 13 հոգի խեղդվեցին, որոնց թւում է օդաչուութեան մասի կառավարիչ կապիտան Մերցինգը և դիրիժաբլի օդաչու՝ լեյտենանտ Խաննէն։

Լայպցիգ.—«Z. 5» դիրիժաբլը սաստիկ քամու պատճառով կարելի չեղաւ սրահ մտցնել։ Քամին վեր բարձրացրեց դիրիժաբլը տանելով իր հետ 4 զինուոր։ Մէկը ժամանակին ցած նետվեց, երկուսը ընկան 150 մետր բարձրութիւնից և մեռան։ Մեքենան բանեցնելու շնորհիւ՝ կորուստի չը մատնվեց դիրիժաբլը։

Դիրիժաբլը տեղաւորեցին սրահի դէմ։

Ռիգա.—Մայօրէնհօֆ լողարանատեղիում հրդեհ ծագեց, որը բռնեց շուտով մեծ շրջան։ Այրվեցին հիւրանոցը, համերգային այգին, կինէմատօգրաֆը և մի քանի տներ։ Օգնութիւն եկաւ Ռիգայից։ Հրդեհի դէմ մաքառումը դժուարանում է ջրի պակասութեան շնորհիւ։ Հրդեհը մեծ չափեր է ստանում։

Ռիգա.—Մայօրէնհօֆի հրդեհը հանգցրին. այրվեց հիւրանոցը, բուժարանը, կինէմատօգրաֆը և 20 տներ առևտրական շարքերով։ Վնասը հասնում է 500,000 ռուբլու։

Ամստերդամ.—Երեկոյեան կօլոնիալ ապրանքներով լի նաւահանգստային պահեստներում հրդեհ ծագեց։ Շինութեան մեծ մասը այրվեց։ Հրդեհը հանգցրին հրդեհաշէջները, որոնցից երեք հոգի վնասվեցին։

Վիեննա.—Սիօնիստական 16-րդ կօնգրէսը ընդունեց Երուսաղէմում համալսարան հիմնելու նպատակով յանձնաժողով կազմելու առաջարկը։ Կօնգրէսը փակվեց։

Մադրիդ.—Ուժեղ քամիների ու յորդառատ անձրևների պատճառով գաւառներից շատերում երկաթուղային հաղորդակցութիւնը ընդհատված է։

Կաղիկս.—Մի քանի յածանաւեր հրաման են ստացել անմիջապէս գնալ Սանտանդէր։

Վաշինգտոն.—Սենատը տարիֆային բիլը ընդունեց 44-ի մեծամասնութեամբ ընդդէմ 37-ի։

Ստոկհոլմ.—Այստեղ եկան «Թիւրքմենէց», «Կազանէց», «Սարաշիյ» և «Վոյսկովոյ» յածանաւերը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 օգոստոսի

Բելգրադ.—Թագաւորական հրովարտակով յայտարարվում է նոր շրջանների միացումը հետևեալ սահմանների՝ Բուլգարիայի հետ սահմանը Բուխարեստի դաշնագրի համաձայն, Ցուն-նատանի հետ՝ սերբ-յունական համաձայնութեամբ, Ալբանիայի հետ՝ այժմ գրաւած սահմանով և համապատասխան Լօնդօնի կօնֆերէնցիայի որոշման և այն որոշումների, որ պիտի ընդունի յատուկ միջազգային յանձնաժողովը. Զերնօգորիայի հետ՝ համաձայն այժմվայ սահմանագծի, մինչև վերջնական լուծումը այդ հարցի։ Բոսնիայի և Հերցեգովինայի սահմանը մնում է առաջվանը։

Ղ. Գ. — Ինչպես գիտենք, Ամերիկայի Հայ դեմոկրատական կուսակցությունը ստեղծվեց Ամերիկայի Հանրապետական կուսակցության ազդեցությամբ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Հանրապետական կուսակցությունը ստեղծվեց Ամերիկայի Ազատագրական պատերազմի ժամանակ։ Ինչպես գիտենք, Ամերիկայի Ազատագրական պատերազմը սկսվեց 1775 թվականին։ Ինչպես գիտենք, 1775 թվականին Ամերիկան գաղութ էր։ Ինչպես գիտենք, գաղութը գաղութ է։ Ինչպես գիտենք, գաղութը գաղութ է։ Ինչպես գիտենք, գաղութը գաղութ է

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Տ.-Մարիամյան

Ամենամեծ հարգանքս Ձեզ, տարեվերջ ու նոր տարվա առթիվ։

Ամենայն հարգանքով՝ Ս. Տ.-Մարիամյան։

Ամսվա 15-ին նկարվեցի Ալեքսանդր Գրիգորյանի մոտ։ Ինչպես գրել եք, ինձ մոտ ամեն ինչ պատրաստ է

ապահով... Էլ ինչ է պակաս։ Ասել կուզի՝ այդ դպրոցներն աւելի շուտ Մխիթարական վիճակի մէջ են՝ թէ նիւթականի և թէ ուսուցչ. համապատասխան կազմերի կողմից, (ասել է՝ նոյն իսկ առաջադիմութեան, լաւ դասատուներ ունենալու կողմից), քան թէ անմխիթար, ինչպէս դուրս է բերում Ռոժերը։

Սակայն ինչումն է կայանում Ռոժերի յուսահատութիւնը. ինչով կարող է ապացուցանել, որ ուսուցչ. կազմերը հանդուցեալ կաթողիկոսի տուած պարտաւորական ծրագրով չեն առաջնորդւում։ Եւ մինթէ տեղատեղ, իբրև բացառութիւն, ուսուցիչներն ի նկատի չը պիտի ունենան և տեղական հանգամանքները. օրինակ՝ եղած պարտաւորական ծրագրին հետեւող ուսուցիչը ինչպէս պիտի վարվի Արմաւիրի չէրքէզախօս և Եդեսիայի թուրքախօս մանուկների հետ, մինթէ նա կարող է՝ ինչքան էլ որ կաշուց դուրս գայ՝ ծրագրին ամբողջապէս անցնել այդ դպրոցներում։ Մինթէ դա հակամանկավարժական չէր լինի։

Վերջապէս՝ ինչպէս թէ «վենդանի կապ ուսուցիչների, դպրոցական վարիչների և առաջնորդի միջև բոլորովին չը կայ»։ Բաց ով է դպրոցների տէրն ու տնօրէնը, եթէ ոչ առաջնորդը. ով է հաստատում հոգաբարձուների—այն է՝ ժողովրդի ներկայացուցիչների—ընտրած ուսուցիչներին, եթէ ոչ առաջնորդը։ Ո՞վ է հսկում ուսուցիչների գործունէութեան վրա, որոշ չափով, պահանջելով տեղեկագիրներ, ուղղութիւն տալով դպրոցներին, եթէ ոչ առաջնորդը։ Իսկ ինչ վերաբերում է Աստրախանի թեմում մինչև օրս թեմ. տեսուչ—կամ տեսուչներ—չը լինելուն, մինթէ դրանում մի որևէ մեղուն մխիթար եպ.։ Երբէք։

Մխիթար եպ. իր պաշտօնավարութեան հէնց սկզբի օրերում առաջադրութիւն արեց բոլոր դպրոցական վարչութիւններին՝ թեմ. տեսչի ոռճկի համար յատկացնել դպրոցական եկամուտների 2 կամ 3%. Սակայն դպրոցների — և այն՝ հարուստ դպրոցների—վարիչներից շատերը մերժեցին այդ։ Եթէ այդպէս դատելու լինենք, պէտք է մեղադրենք Աստրախանի թեմի նախկին բոլոր առաջնորդներին, թէ ինչու Աստրախանի թեմը թեմ. դպրոց էլ չունի։

Գալով Ռոժերի երկրորդ յօդուածին, որ վերաբերում է Աստրախանի թեմի հայ քահանայութեանը, պէտք է ասեմ, որ այդ գրութեան մէջ աչք է ծակում երկու հակասական ծայր. մէկը՝ ներբող թեմի հայ քահանայութեանը, միւսը՝ պարսաւանք թեմ. առաջնորդին։

Եթէ քահանայութիւնն իրօք այդպէս իր կոչման բարձրութեան վրա է, որ պատիւ է բորում սրա—և սա ց, բոզալեց, ժողովրդ դին մօտիկն ու սրտացաւը—մինթէ առաջնորդը արդեօք կը հանդիսանար նրա օգտակար գործունէութեան... Շատ ցաւալի է, որ Աստրախան քաղաքի քահանայութեան մի որոշ մասը հէնց սկզբից հակառակ դիրք բռնեց Մխիթար եպիսկոպոսի գործունէութեան նկատմամբ. նրանք են կամոլին հեռացել ակտիվ գործունէութիւնից, այլ ոչ թէ նրանց հեռացրել են։

Վլադիկավկազի ծխատէր Յակ. ք. Սահակեանը, որ թեմի լաւ քահանաներից մինն է, մի շատ կարևոր հանգամանքով ինքն է կամոլին հրաժարվել գործակալութեան պաշտօնից, որին այսօր՝ առանց այն էլ շատ զբաղված լինելով՝ չի ձգտում երբէք։

Մօզդոկում աշխարհական գործակալ նշանակված է հանդուցեալ Արիստակէս արքեպ.-ի թեմական-գործակալութեան օրօք, երբ տեղիս քահանաները—խեղճ Մօզդոկ քաղաքի մշտական դժբաղդութիւնն է այդ—ժողովրդական առածի նման՝ «իրար եախից ձաւար էին հաւաքում»։

Եւ այսպէս միւսները։ Քաղաքների և յայտնի տեղերի լաւ քահանաները պատահական և հայ դպրոցներում մեծ մասամբ կրօնուսոյցի—և տեղ-տեղ աւագ ուսուցչի—պաշտօն են կատարում, որն աւելի բեղմնաւոր ու շահաւէտ է, քան գործակալութիւնը, որ մի ձրի պաշտօն է։

Յովհ. ք. Վերանեան

ԻՄ ԲՈՂՈՔԸ

Թաւրիզ, 16 օգոստոսի

Շնորհիւ Աստրպատականի առաջնորդ Ներսէս վ. Մելիք-Թանգեանի ինքնագլուխ և միապետական գործելակերպի՝ մեռած դրութեան մէջ են մեր թեմական խորհուրդն ու թեմական ժողովը։

Մեր թեմի նշանակված առաջնորդը մի կերպ թեմական խորհրդի կարգադրած կամ առաջ բերելուց յետոյ, վեց ամսվայ ընթացքում՝ թեմական խորհրդի 6 նիստ չի գումարել։ Գումարված 2—3 ժողովները եղել են ոչ լրիւ անդամներով, և եղել են որոշումներ, որոնք կայացել են հապճեպ։

Ամենից աղաղակողը՝ հեռանալը ինքնագլուխ գործունէութեան՝ Թաւրիզի Մարտիրոսաքաղ անուամբ յայտնի հանգստարանը ձեռքից տալն է։

Մի անգամ թեմական ժողովում այդ մասին խօսելուց և դատավարութիւնը մի անհատի յանձնելուց յետոյ, այլևս չը գումարվեց թեմական ժողով, որ անհատաբար կամ ինքնագլխաբար ոչինչ չը գործվէր և չը վանգվէր հանգստարանի հարցը։ Շնորհիւ թեմական ժողովը բանի տեղ չը դնելու, ընորհիւ ինքնօրէն գործելու, մենք մի օր իմացանք, որ առաջնորդարանի ներկայացուցիչ Զ. Նազարբէգեան, փոխանորդ քահանայ Մանուկեան և քահանայ Հմայեակ պարտված են դուրս եկել դատարանից՝ նոր հրապարակ եկած և ռուսական հիւպատոսարանի պաշտօնեայ Բաբայեվի առաջ և որ մենք Թաւրիզի հայերս արդէն ձեռքից տուել ենք 70-80 տարիներից ի վեր մեր սեփականութիւնը համարվող բաւական հրաշկայ տարածութեամբ մի հողամաս՝ գերեզմանատեղիից։

Մեծ տարածութեամբ այդ հողամասի կորուստը՝ չը ցնցեց ոչ ոքի, տարօրինակօրէն մեր քաղաքում շփոթ ու իրարանցումն առաջ չը բերեց այդ ձախորդ դատավարութիւնը։ Զայն ու ծպտուն չը հանեցին անգամ ժողովրդի ներկայացուցչութեամբ պարծեցող պ. պ. պատգամաւորները, մինչդեռ հէնց նրանք պիտի պահանջէին թեմական ժողովի արտակարգ նիստ, հարցապնդում պիտի ուղղէին ինքնօրէն գործող առաջնորդին և նշանակված դատավարներին։

Առաջնորդը, կարծելով որ հանգստարանի կորստեան լուրը իբրև կայծակ կը ճայթի ողջ քաղաքում և մանաւանդ պատգամաւորների շրջանում և որ գիտակից պատգամաւորները կը սկսեն նեղող հարցապնդումները, շտապեց պատրաւակել թեմի այցելութիւնը և եկաւ Թաւրիզից, մանաւանդ որ միւս կողմից էլ քէյվանցոց վան յոյսերով Թաւրիզ բերելուց յետոյ, նրանց համար էլ ոչինչ չէր արել, ուստի յարմարագոյն բոպէն էր օձիքն ազատել ու ճամբորդել թեմում։ Ասենք միջանկեալ, որ 40 այդպիսի այցճանապարհորդութիւններ ոչ ժողովուրդ կը բարձրացնեն և ոչ էլ հոգեոր վերաշինութիւն առաջ կը բերեն։ Փոթորկի արագութեամբ 1 օր կամ 2 օր այս ու այն գիւղում մնալը ոչինչ արդիւնք չունի և ոչ էլ դաւանափոխութիւնը դադար կանի։

Ընդհանուր և դատապարտելի լռութեան մէջ՝ հրապարակով ես իմ բողոքն եմ բարձրացնում առաջնորդի ինքնագլուխ գործունէութեան, թեմական ժողովով հանգստարանի հարցը առաջ չը տանելու և հանգիստարանը ձեռքից տալու դէմ։ Պէտք էր նախօրօք թեմական ժողովում երկար խորհրդակցութիւններ ունենալ, դատավարութեան աջողութեան համար մշակել ըստ հայեաց գործելակերպ և մի առողջ ծրագիր և թեմական ժողովի մշտական գիտակցութեամբ վարել այդ դաշը, այլ ոչ թէ այնպէս՝ ինչպէս եղաւ և վերջը մենք մոխրի նստեցինք։ Եթէ հանգստարանը մերը չէր և շատ-շատ էինք անում այդ խլելու, ապա այդ պատիւ չի բերում առաջնորդին և Թաւրիզի հայերս էլ էլի էր դա մեր ունեցածի փականութիւնն էր, ունէինք փատաթղթեր, ինչու այդպէս թեթև և անկշռադատ վարվեցինք և հէնց առաջին լուրջ դատավարութիւնից յետոյ՝ ձեռներս ծալած՝ ամենքս մեր գործին գնացինք, իբրև թէ ոչինչ չենք կորցրել։

Այս տողերը կարդալուց յետոյ, եթէ ոչ պատգամաւորները, կարծում ենք գտնէ Թաւրիզի հասարակութիւնը մի թափ կը տայ իրան, նորից ձեռք կառնի այդ դաշը և չի թողնի, որ պաղերից աւանդ մնացած այդ հողամասը սեփականեն ուրիշները։

Մօտիկ անցեալում մի քանի հազար գաւառացիներ Կ. Պոլսում ամբողջ գիշերներ պահակ կանգնեցին, կառավարութեան զօրքի հետ կռիւ բանվեցին՝ ձեռքից չը թողնելու Պանկալթիի գերեզմանատունը և յետ չը կանգնեցին՝ մինչև 15,000 ոսկի չառան թիւրք կառավարութիւնից։

Սակայն այստեղ ոչ թիւրք կառավարութիւն ու զօրք կայ և ոչ էլ պետական բռնութիւնս։ Մենք մեր դիմաց ունենք արհեստականապէս և սուտ օրինականութեամբ մեր հողին տիրացած մի խեղճ դերվիշ, որ հայոց պահանջներից ազատվելու համար՝ իր կարծեցեալ սեփականութիւնը ծախել է մի ռուսահպատակի, որի դէմ խօսող և կռուծք տուող մէկը կուզենք այժմ և այս սուտհանս կարծում ենք՝ մեր ինտելիգենտ Թաւրիզը նոյնքան եռանդ ու անձնուիրութիւն ցոյց կը տայ հանգստարանի այս հարցում, որպէս Կ. Պոլսի գաւառացիները, և ամենքը մի անձ մի հոգի եղած նորից ձեռք կառնեն հանգստարանի դաշը և տէր կը լինեն իրաւանց իրաւունքին, չը խնայելով ոչ մի դրամ այս ճանապարհին։

Մարաղի հայոց պատգամաւոր՝
Աղէքսանդր Տէր-Վարդանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Բրիտանական մինիստրութիւնն իր զօրքի մէջ մօտիկ ապագայում մացնելու է նոր հրացանի գործածութիւնը։ Այդ հրացանը աշխարհիս ամենալաւն ու ամենակատարելագործվածն է համարվում։

— Ուրմիայի շրջանում նորերս պատահած ռուս-թիւրքական ընդհարման առիթով արտաքին գործերի մինիստրութեան պարսկական բաժանմունքի կառավարիչ Վ. Օ. ֆոն-Կլէմմը յայտնել է «Բ. Մ.» լրագրի թղթակցին, որ ընդհարման շարժառիթն եղել է այն, որ տեղական բնակիչների նախիրը քիւրդերը քշել-տարել են։ Իրանց նախիրը յետ խլելու նպատակով բնակիչները հետապնդել են քիւրդերին և ընդհարվել սահմանագլխի վրա թիւրքական ասկերների հետ։ Վերջիններս, պաշտպանելով քիւրդերին, սկսել են հրացանաձգութիւն հետապնդողների դէմ և սպանել են նրանց յետ նահանջել ու ապա իրանք էլ անցել են սահմանը ու, հանդիպելով սակաւաթիւ ռուս զօրամասի, կռիւ սկսել։

— Բանակցութիւններ վարելու համար Կ. Պոլիս գնացած բոլգարական պատգամաւորների հետ թիւրք կառավարութիւնը վարվում է ինչպէս գերիների հետ. նրանց վրա հսկողութիւն է նշանակված. նրանք շրջում են քաղաքում թիւրք օֆիցէրի ուղեկցութեամբ։ Հսկողութիւն է նշանակված նաև նրանց մօտ երթևեկողների վրա։

— Ուղղափառ սինոդում Աֆոնի վարդապետների գործը քննելու ժամանակ խոշոր տարաձայնութիւններ են ծագել վերջնական վճիռ կայացնելու հարցում։

— Սերբիական և չերնոգորական կառավարութիւնները յուշագրեր են պատրաստում ներկայացնելու պետութիւններին, յայտարարելով որ Ալբանիայի չէզոքութիւնը երաշխաւորող պետութիւնները պէտք է արգելք լինեն որևէ զինված զօրախմբի խուժելուն ալբանական հողը։

— Պետերբուրգում լուր է պտտում, որ շվեդացի օֆիցէր Ֆոն-Լիսէնին լրտեսութեան մէջ մեղադրելը չէ հաստատվում։ Մօտ օրերս նրան կազատեն։

— «Голосъ Москвы» լրագրին Բուգուլից հեռագրում են, որ Կոլոբովի գործարանում գործադուլ անելուն համար ծառայութիւնից արձակված մի բանւոր ուզեց մոթթել գործարանի կառավարիչ Օտտոյին։ Բանւորը կալանաւորված է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

28 օգոստոսի

ՎԻԼՆԱ։ Այսօր ռուսգարական սահմանի Գալիցիայի շրջանի Օպօրչէկ համայնքում, բակտէրիօլոգիական քննութիւնը երևան է հանել խոլերային երկու դէպք։

ՍԱՐԱՏՕՎ։ Վախճանվեց «Вѣстникъ»-ի հրատարակիչ, գաւառական հնագոյն ժուրնալիստ Գօրիցօնտովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւված է «День» լրագրի № 231-ը «Գրական նորոյթ։ Զերնիշէվսկիի դաշը» յօդուածը վերտեղելու համար։

ՄՕՍԿՎԱ։ Գրաւված է «Рабочая газета» լրագրի № 9-ը։ Դատ է սկսված խմբագրի դէմ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԼԻԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արաց գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստաստր գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. ցերմ.։ Մարդասար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցերմ., Եւլախ 5 ժ. 19 ր. ցերմ., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻ.—Պօստաստր գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. ցերմ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդասար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստաստր գնացքը № 4Д./3—12 ժ. 51 ր. ցերմ., հասնում է Դարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր.. ցերմ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Դարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցերմ., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցերմ., Երևան 1 ժ. 33 ր. ցերմ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Դարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցերմ., Դարս 4 ժ. 18 ր. ցերմ.։

ԲՕՐԺՕՄԻ.—Մարդասար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցերմ.։ Մարդասար № 19/20—3 ժ. 18 ր. ցերմ., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցերմ., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Ի ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արաց գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստաստր գնացքը № 3—9 ½ ժ. 1 ր. առ.։ Մարդասար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցերմ.։ Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստաստր գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդասար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցերմ.։ Մարդասար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստաստր գնացքը № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուլիա, Գօրնոյօվի արձանի հանդէպ)

Սէմեն or, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԵՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ԶԻՆՕՎԱՆԻ—9½—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկատաս.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻԶԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկատաս։ Սրտան, մէզի, խոսքի հետազօտութիւն։
ԳԻՆ-ԲԱՅԱՆ ՅԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻԶԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—84

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաջունիի գեղարուեստանոց

Նկարիչ բազմարուեստագէտ և կանանց ձեռագործի մասնագէտ Պետրոս Քաջունի, հատատավելով Թիֆլիսում ընդունում է աշակերտներ և աշակերտուհիներ։
Մասնագիտութեան ընթացքը 3 տարի։
Աշակերտը վճարում է կանխիկ 10 ռուբլի և ապա ամսական 6 ռուբլի, վկայական ստանալու միջոցին 50 ռուբլի։
Աշակերտուհիները կը սովորեն՝ 1) Գծագրութիւն, 2) Զրաներկ, 3) Իւղաներկ, 4) Ասեղնագործութիւն և Ասեղնագործական նրբակարչութիւն, 5) Փորագրութիւն։
Դիմել Միքայէլեան փողոց № 59.
Արհեստանոցը բաց է ցանկացողների համար ամեն օր։

711. 3—1

Հոյս են տեսել՝
ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ.
ՊԵՇՈՊԵՆԻԱ Св-мъ СААКУ и МЕСРОПУ
Բազմաձայն մեկնմամբ Ռ. Դ.
(Որ զօնուրս Աստուածային. Որք զարդարեցին. Նմանեալ Մովսէսի։ Ցաւեղուած՝ Հրաստարան Աստուած. եւ Ցաղ Հայրապետաց) Բառաձայն խառն խմբի համար պարտուրան. 50 կ.
ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ՝
ԵՐԳԵՑՈՂ. ՀԱՅԱՍՏԱՆ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ.
ПѢСНОПѢНІЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ.
Բառաձայն խառն խմբի համար.

Տէր ողորմեա (Запричастный, 3 №).	30 կ.
Հաղորդական (Панихида. 8 №).	70 կ.
Պսակի (Вѣнчаніе, 6 №).	60 կ.
Հրատարակեալ Աստուած. (Св. Григ.Просв.).	20 կ.
Օրհնեցէք հայրապետական «Քարէ» (Армянская патріарш. кантата).	40 կ.

Պահեստ՝ МОСКВА, Неглинный пр., 14. Музыкальн. торговля «П. Юргенсонъ».

705. 3—2

ՓՈՐՁՎԱԾ
Ուսուցիչ-խմբագիր
Պաշտօն է որոնում։
Դիմել՝ г. Георгіевскъ (Терской Обл.), Армянскому регенту.
(ա.օ.) 675. 6—6

Հարկաւոր է փորձված, եկեղեցական ձայնագրութեան հմուտ և առանձնապէս՝ **ՏԻՐԱՅՈՒ։** Տարեկան 240 ռուբ. ռոճիկ և մօտ 300 ռուբլի արդիւնք։ Հասցէն Георгіевскъ, Священ. Нерсесу Варданяну.
(29,30,) 693. 3—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
Ռուսահայ գրականութեան պատմութիւն
(Երկրորդ տպագրութիւն)
Պրակ I—40 կոպէկ, պրակ II—50 կոպէկ։
Դիմել Թիֆլիս, Ն. Աղանեանի տպարան, Պոլիցեյսկայա № 7. զեղչ 20%։
(շ. ու.) 707. 2—1

ՆՈՐԱՇԷՆԻ ս. Աստուածածնի ս. Մարիամեան եկեղեցական-ծխական օրիորդաց միդասեան դպրոցում բացվում է ազատ 12 դաս
ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԻՑ և ԻՐԱՎՈՒՆՔԻՑ։
Ուսուցչուհիներից նրանք, որոնք ցանկանում են ստանձնել այդ դասերը և միևնոյն ժամանակ վարել դասարանական վարժուհու պաշտօնը, թող բարեհաճեն դիմել իրանց խնդիրքով դպրոցի աւագ վարժուհուն ամենայն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև կէսօրվայ ժամը 1-ը, ներկայացնելով իրանց վկայականները։
709. 3—1

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ բանւորներ և բանւորուհիներ «ՐԻԿՏԻՖԻԿԱՏ ԸՆԿ.» սպիրտի պահեստի համար, նաև տպրանքը քաղաքում շրջեցնելու համար անձինք գրաւականով կամ երաշխաւորութեամբ։ Դիմել Ընկ. գրասենեակին, Զէրքէզովսկայա, № 65, ժամը 7—3-ը ցերեկ։
(ու.շ.) 706. 2—1

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) ԶՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդոյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գիւ դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՈՂ ՈԳԻՆ, վէպ. Ց. Սօլովեանի . . . . . —40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մէ-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիրը վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25%։
(5) 10—7

ԿԱՐՈՒԶԵԻԻ ԴՊՐՈՑ
Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 26-ից, իսկ պարապմունքները՝ սեպտեմբերի 2-ից։
Դասաւանդութիւնը ՎՕՐՏԻ սիստեմով է կատարվում և ծխական դպրոցների ծրագրով։ Ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ կանանց շքազգեստների և մօդելի հագուստների՝ հանրամատչելի գներով։ Ուսուցչուհիներին մաս առ մաս վճարումն։ Դպրոցին կից կան ՉԵՌԱԳՈՐԾԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ, ինչպէս և յատուկ մանկական հագուստների բաժանմունք։
Փողոց Սօլօլակսկայա, տուն իշխ. Թումանեանի № 11.
(ու.) 689. 2—2

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը
սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1913/14 ուսումնական տարվանից հրաւիրվում են
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՄԲ
ԴԱՍԱՏՈՒՆԵՐ
հետեւեալ առարկաներից։ 1) ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ առարկաների համար 20 դասով և 2) ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ՝ շաբաթական 20 դաս։ Դասընթացը՝ առաջին 12 դասի համար 70-ական ռուբլի, իսկ մնացած դասերի համար 60-ական ռուբլի։ Մաթեմատիկական առարկայի գրաւորների համար տրվում է առանձին վարձատրութիւն։
Խնդիրները ուսման վկայականների հետ միասին ուղարկել Հոգաբարձութեան մինչև սեպտեմբերի 1-ը այս հասցէով. Тифлисъ. Попечительству Армянской Персисянъ Семинаріи.
(ու.) 692. 3—3

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլայեվսկայա, 36, Գօրնոյօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—15

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այլու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԱՆԱՁԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ԳՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԴՆԵՐՈՎ։
ՏԷԼԷՖՕՆ № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный